ՆԱԽԱԳԾԱՅԻՆ –ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ԱԱԻ-ՄԱԾՁԲ-21/3

ք. Երևան «01» սեպտեմբեր 2021թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն՝ Ալեքսանդր Բազարչյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Վա-Մայնդ» ՍՊԸ-ն, այսուհետ «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Հայկ Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, որոնք միասին հիշատակման դեպքում կանվանվեն՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի, Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է կատարել ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան _Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի վարչական շենքի առաջին հարկի սրահի, երկրորդ հարկի տնօրենի սենյակի, բաց պատշգամբի և տանիքի՝ այսուհետ՝ Օբյեկտ, ընթացիկ նորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները /այսուհետ Աշխատանքներ/:

1.3. Այն դեպքում, երբ Աշխատանքների բնույթից կախված, անհրաժեշտություն առաջանա կրճատել կամ ավելացնել (այդ թվում՝ նոր աշխատանքներ կատարելու միջոցով) Աշխատանքների ծավալները, ապա կատարված Աշխատանքների ծավալը, ընդհանուր գինը և նկարագրերը հավելվածի տեսքով կարտացոլվեն երկկողմանի հաստատված փաստաթղթերում, և դրանք կընդունվեն որպես Աշխատանքների վերջնական ծավալ և ընդհանուր գին:

1.4. Ծառայությունների մատուցման ժամկետների սկիզբը համարվում է Պայմանագրի կնքման օրը, վերջնաժամկետ է սահմանվում 15 դեկտեմբեր 2021թ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով և լրիվ ծավալով.

2.1.2. իր ուժերով և հաշվին Պատվիրատուի կողմից սահմանված խելամիտ ժամկետում վերացնել ծառայությունների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տրված թերությունները.

2.1.3. ծառայությունները մատուցել անձամբ.

2.1.4. ծառայությունները մատուցել Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակահատվածին համապատասխան.

2.1.5. տեղեկացնել Պատվիրատուին լրացուցիչ աշխատանքների իրականացման համար պայմանագրային արժեքի և ժամկետների փոփոխելու անհրաժեշտության մասին.

2.1.6. ծառայությունները մատուցել իր ուժերով, նյութերով, սարքավորումներով և միջոցներով.

2.1.7. մինչև ծառայությունների արդյունքը Պատվիրատուին հանձնելը, կրել իր կողմից պատճառված վնասների ռիսկը.

2.1.8. սույն Պայմանագրի 1.2 կետում նշված Աշխատանքների կատարման ընթացքում խստորեն պահպանել աշխատանքների անվտանգ կատարմանն ուղղված գործող օրենսդրության պահանջները՝ կրելով դրանց խախտման հետևանքով Պատվիրատուին կամ երրորդ անձանց պատճառված ցանկացած վնասի փոխհատուցման պատասխանատվությունը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. մատուցված ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված կարգով.

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունել պատշաճ կերպով մատուցված ծառայությունների արդյունքները և վճարել դրանց դիմաց.

2.3.2. ցանկացած ժամանակ (սույն պայմանագրի 8.3 կետով նախատեսված կարգով) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց՝ Պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. ցանկացած պահին ստուգել Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ չմիջամտելով նրա գործունեությանը.

2.4.2. հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել կորուստների հատուցում, եթե Կատարողը ժամանակին ձեռնամուխ չի լինում սույն պայմանագրի իրականացմանը.

2.4.3. ցանկացած ժամանակ (սույն պայմանագրի 8.3 կետով նախատեսված կարգով) հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին.

2.4.4. Աշխատանքների կատարման թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են աշխատանքների արդյունքները իրեն հանձնելու պահից 1 /մեկ/ ամսվա ընթացքում:

3. Պայմանագրի գինը և վճարման պայմանները

3.1. Պայմանագրի գինը կազմում է 950.000 /ինն հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ ներառյալ հարկերը:

3.2. Պայմանագրի գինը կայուն է և կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

3.3 Պայմանագրով նախատեսված վճարումներն իրականացվում են 4 փուլերով՝ ըստ փաստացի կատարված ծառայության:

3.3.1 Առաջին փուլ՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի առաջին հարկի սրահի ընթացիկ վերանորոգման նախագծային- նախահաշվային փաստաթղթերի կազմում: Պատվիրատուն վճարում է կատարողին 350000(երեք հարյուր հիսուն հազար)դրամ

3.3.2 Երկրորդ փուլ՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի երկրորդ հարկի տնօրենի սենյակի ընթացիկ վերանորոգման նախագծային-նախահաշվային փաստաթղթերի կազմում: Պատվիրատուն վճարում է կատարողին 200000(երկու հարյուր հազար)դրամ

3.3.3 Երրորդ փուլ՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի երկրորդ հարկի բաց պատշգամբի ընթացիկ վերանորոգման նախագծային-նախահաշվային փաստաթղթերի կազմում: Պատվիրատուն վճարում է կատարողին 200000(երկու հարյուր հազար)դրամ

3.3.4 Չորրորդ փուլ՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տանիքի ընթացիկ վերանորոգման նախագծային- նախահաշվային փաստաթղթերի կազմում: Պատվիրատուն վճարում է կատարողին 200000(երկու հարյուր հազար)դրամ

4. Ծառայությունների հանձնումն ու ընդունումը

4.1. Ծառայությունների մատուցման արդյունքը Պատվիրատուի լիազոր ներկայացուցչին է հանձնվում Պատվիրատուի գլխավոր գրասենյակում՝ ձևակերպելով այն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հաշիվ-ապրանքագրով և հանձնման-ընդունման ակտով:

5. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

5.1. Կողմերը իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար սույն պայմանագրով չնախատեսված դեպքում պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Կողմերից որևէ մեկի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետները խախտելու դեպքում, մյուս Կողմը իրավունք ունի խախտող Կողմից պահանջել տույժ, Պայմանագրի ընդհանուր գնի 0.1%-ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

5.3. Տույժի վճարումը չի ազատում Կողմերին կատարելու սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները:

5.4 Կատարողը պարտավոր է իր աշխատակիցներին ծանոթացնել անվտանգության կանոններին և կրում է լիարժեք պատասխանատվություն դրանց չպահպանման հետևանքով առաջացող բոլոր հնարավոր հետևանքների համար:

5.5 Կատարողը կրում է լիարժեք պատասխանատվություն իր կամ իր աշխատակիցների կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուին կամ երրորդ անձանց հասցված ցանկացած վնասի համար:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

6.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրի լրիվ կամ մասնակի չկատարման համար, եթե այն հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք դուրս են կողմերի վերահսկողությունից և կարող են որակավորվել որպես արտակարգ իրավիճակ կամ այլ աղետ (բնական աղետներ, ջրհեղեղ, հրդեհ, պատերազմ և այլն):

6.2. Եթե վերոհիշյալ հանգամանքներից որևէ մեկը անմիջականորեն ազդել է պայմանագրային պարտավորությունների ժամկետում չկատարման վրա, սույն Պայմանագրի ժամկետը երկարացվում է այդ հանգամանքների տևողության ժամկետով:

6.3. Այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել են այս հանգամանքները, պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 10 (Տաս) օրվա ընթացքում սկսած դրանց վրա հասնելու պահից, գրավոր ծանուցելու մյուս կողմին:

6.4. Ֆորս-մաժոր հանգամանքների առաջանալու դեպքում, այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել են այդ հանգամանքները, ազատվում է սույն Պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից, այդ հանգամանքների վերացման ժամկետով:

6.5. Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվելու ամբողջ Պայմանագրից կամ նրա մասից, եթե ֆորս-մաժոր հանգամանքների հետևանքով ժամկետների ուշացումը կազմում է 3 ամսից ավել:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

8.2. Սույն պայմանագրի լրացումներն ու փոփոխությունները կարող են կատարվել միայն գրավոր ձևով՝ կողմերի համաձայնությամբ և ստորագրությամբ:

8.3. Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին նախօրոք՝ 10 օր առաջ, գրավոր տեղեկացնելով:

8.4. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի իրավաբանական հասցեները

«Պատվիրատու»	*«Կատարող»*
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 49/4, ՀՎՀՀ 00011624 Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մասնաճյուղ հ/հ՝ 1630581001441	«Վա-Մայնդ» ՍՊԸ ՀՎՀՀ՝ 00125425 ՀՀ, ք. Երևան, Սունդուկյան 13շ. 18 բն. «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մասնաճյուղ Հ/Հ 11500439923000
Տնօրեն _____ Ա.Բաղդասարյան	Տնօրեն _____ Հայկ Վարդանյան